**ՄԱԿ-Ի ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ (ՊՀԾ) ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՇԻՐԱԿԻ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ԼՈՌՈՒ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից հայտարարված մրցույթին դիմելու համար մնացել են հաշված օրեր: Մրցույթի 30 հաջողակ դիմորդ հնավորություն կունենա ստանալ 30% սուբսիդավորում արևային կայաններ տեղադրելու համար:

Մանրամասները՝ ստորև:

ՊՀԾն հնարավորություն է ստեղծում օժանդակել սննդի արտադրության ոլորտում գործող շուրջ 30 փոքր ձեռնարկությունների՝ տրամադրելով 30% սուբսիդավորում արևային կայաններ տեղադրելու համար, որը կնպաստի ձեռնարկությունների արտադրողականության բարձրացմանը և եկամտաբերության աճին:

Արևային կայան ստացող փոքր ձեռնարկությունը որպես կանխավճար պետք է վճարի արևային կայանի արժեքի ընդամենը 10%-ը: Արժեքի մնացած 60%-ը փոքր ձեռնարկությունը կվճարի մաս առ մաս՝ 5 տարվա ընթացքում:

Ծրագրի ընտրության չափանիշների մասին լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք այստեղ՝ https://bit.ly/3vBCiip

Ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է լրացնել առցանց հայտադիմում հետևյալ հղումով՝ https://enketo.moda.wfp.org/x/usPfqNah

Դիմումները բաց կլինեն 2022 թ. ապրիլի 25-ից մինչև 2022թ.-ի մայիսի 20-ը, ժամը 18:00:

Հաջողակ դիմորդները կտեղեկացվեն ՊՀԾ-ի կողմից:

*Առցանց հայտադիմումի լրացման հետ կապված դժվարություններ ունենալու, ինչպես նաև լրացուցիչ հարցերի դեպքում, կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով (+374 10) 58 05 38 կամ կապ հաստատել հետևյալ էլ. հասցով՝ wfp.yerevan@wfp:*